ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 օգոստոսի երեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

120
(2600)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 79

Վարչապետ ընտրվելու 100 օրվա կապակցությամբ՝ 2018 թվականի օգոստոսի 17-ին՝ Հանրապետության հրապարակում ելույթ ունենալիս, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հպարտորեն հայտարարում էր, թե հեղափոխությունից հետո տնտեսական ցնցումներ չեն եղել: «Մեր հեղափոխությունը բացառիկ է նաեւ այն պատճառով, որ մեր հեղափոխությանը չհետեւեց տնտեսական անկում, ընդհակառակը՝ հեղափոխությունից հետո արձանագրվում են տնտեսական ակտիվության բավականին բարձր ցուցանիշներ: Հունիս ամիսը հետհեղափոխական առաջին ամիսն է, գրանցվել է 9.6 տոկոս տնտեսական ակտիվության ցուցանիշ, իսկ տարվա տնտեսական ակտիվության ցուցանիշը 8.9 տոկոս է, եւ կան բոլոր հիմքերը՝ պնդելու, որ Հայաստանի Հանրապետությունում տնտեսական ակտիվության ցուցանիշը շարունակելու է աճ ապրել»: Իսկ ի՞նչ պատկեր ունենք այժմ: Տնտեսական ակտիվության ցուցանիշը հնարավոր եղավ բարձր պահել միայն 2019 թվականին, սակայն այժմ պատկերն այլ է: 2020 թվականին, 2019-ի հետ համեմատ, Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցանիշը անկում է ապրել 7,5 տոկոսով: 2020-ին, 2019 թվականի համեմատ, Հայաստանից արտահանումը կրճատվել է 3,9 տոկոսով, իսկ ներմուծումը անկում է ապրել 17,7 տոկոսով: 2021 թվականը, չնայած տնտեսական աճի ավելի մեծ խոստումներին եւ հայտարարություններին, Հայաստանը փակել է 5,8 տոկոս տնտեսական ակտիվության ցուցանիշով: Ստացվում է՝ հերթական անգամ Նիկոլ Փաշինյանն արել է հայտարարություններ, որոնք իրականություն չեն դարձել, եւ դրանով նա խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սեպտեմբերի 18-ին կայանալիք վարչության ընտրությանը եւ կուսակցության համագումարին ընդառաջ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում կրքերը չեն հանդարտվում: Մասնավորապես, շատ ՔՊ-ականների դուր չի գալիս ՔՊ քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանի պահվածքը: Բանն այն է, որ վերջինս հավակնում է դառնալ ՔՊ վարչության նախագահ, քանի որ չեն կարող նախագահ լինել ո՛չ Նիկոլ Փաշինյանը, ո՛չ էլ ներկայիս նախագահ Սուրեն Պապիկյանը. ռոտացիոն կարգով պետք է փոխվի նախագահը՝ ըստ ՔՊ կանոնադրության: Եւ, ահա, Ավինյանը, կարծես թե, իր առանձին թիմն է ձեւավորել ու թեժ պայքարում է նախագահի կարգավիճակի համար՝ կանգ չառնելով ոչնչի առջեւ: Պարզ չէ՝ նրա հանդուգն պահվածքը Նիկոլ Փաշինյանի հետ համաձայնեցված է, թե ինքնագործունեություն: Հավելենք, որ ՔՊ-ի վարչության կազմում տեղ գտնելու համար թեժ պայքար է մղում պատգամավոր Արսեն Թորոսյանը, որը պարտադիր մասնակցում է բոլոր միջոցառումներին, շրջում մարզերով: Նրա հետ մեկտեղ ակտիվ են նաեւ Արթուր Հովհաննիսյանը, Արփի Դավոյանն ու Վահագն Ալեքսանյանը, որոնք Նիկոլ Փաշինյանի աչքին երեւալու համար անում են հնարավոր ու անհնար ամեն ինչ: Հավելենք, որ, համագումարին ընդառաջ, նոր զարգացումներ կարող են լինել, քանի որ վարչության եւ վերահսկող հանձնաժողովի ընտրությունների համար առաջադրվել է համապատասխանաբար 48 եւ 16 թեկնածու: Ասել է թե՝ մրցակցությունը շատ մեծ է, բայց, միեւնույնն է, Նիկոլ Փաշինյանի կամքից է կախված՝ ով «կընտրվի» վարչության կազմում եւ ով կմերժվի:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գյումրու նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանի որդու՝ Միսակ Բալասանյանի՝ Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոս նշանակվելու հարցը, որը երկար ժամանակ շրջանառվում էր, վերջնականապես փակված է: Գլխավոր պատճառը, ինչպես մեր աղբյուրներն են նշում, Միսակ Բալասանյանի ռուսական քաղաքացիությունն է: Այս փուլում դժվար է պատկերացնել՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացուն ինչպես կարող է ԱՄՆ-ն համաձայնել նշանակել որեւէ պաշտոնի: Պարզ է, որ աշխարհաքաղաքական այս լարված իրավիճակում նման նշանակումը կարող է դիվանագիտական խնդիր առաջացնել: Իսկ ինչ վերաբերում է Միսակ Բալասանյանին, ապա «Ժողովուրդ» օրաթերթի ունեցած տեղեկություններով, նա ռուսական խոշոր ընկերություններից մեկից ստացել է թռփ մենեջերի աշխատանքի առաջարկություն եւ մոտ ժամանակներս կտեղափոխվի Մոսկվա՝ աշխատանքի: Մենք փորձեցինք իհարկե այս լուրերի իսկությունը ճշտել Միսակ Բալասանյանից, սակայն նրա հետ կապվելու մեր փորձերը հաջողություն չունեցան:

Ազգային ժողովի պատգամավորները հերթական «վոյաժներին» են պատրաստվում: Այս անգամ խորհրդարանականներից մի քանիսը կլինեն Աթենքում, Ռաբաթում, Իզմիրում, Սրատսբուրգում եւ Բեռնում: Այսպես, օգոստոսի 5-ին այն ժամանակ ԱԺ նախագահի պարտականությունները կատարող Ռուբեն Ռուբինյանը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանին սեպտեմբերի 17-20-ն Աթենք գործուղելու մասին որոշում է ստորագրել: Նա այնտեղ կմասնակցի ԵԽԽՎ Միգրացիայի, փախստականների եւ տեղահանված անձանց հարցերի հանձնաժողովի նիստի աշխատանքներին: Օգոստոսի 8-ին արձակուրդից վերադարձած ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը գործուղումների միանգամից մի քանի որոշում է ստորագրել, ըստ այդմ՝ ԵԽԽՎ Սոցիալական, առողջապահության եւ կայուն զարգացման հարցերի հանձնաժողովի նիստի աշխատանքներին մասնակցելու համար սեպտեմբերի 21-24-ը Իզմիր (Թուրքիայի Հանրապետություն) կգործուղվեն ԵԽԽՎ-ում պատվիրակության անդամ, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանն ու ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Գեւորգյանը: Վերջինս, ի դեպ, դարձյալ Ալեն Սիմոյանի որոշմամբ, Թուրքիայից անմիջապես Ստրասբուրգ կմեկնի՝ նորից գործուղման: Այստեղ սեպտեմբերի 25-28-ը նա կմասնակցի Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության եւ կառավարման հարցերի եվրոպական հանձնաժողովի աշխատանքային խմբի «Խորհրդակցական մասնակցային ժողովրդավարություն» թեմայով քննարկման աշխատանքներին: ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանն էլ սեպտեմբերի 4-6-ը՝ Շվեյցարիայի Բեռն, 7-ին Նյոշատել քաղաքներում ԵԽԽՎ Իրավական եւ մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովի նիստի աշխատանքներին կմասնակցի: Ի դեպ, վերոնշյալ բոլոր գործուղումների ճանապարհածախսը, օրապահիկը, ինչպես նաեւ գիշերավարձը վճարվելու է ԱԺ բյուջեի՝ հարկատուներիս հաշվին:

ՊՈՊՈՒԼԻՍՏԱԿԱՆ Է

«ՀՈԳ ՉԷ, ԹԵ ԱՐԴՅՈՒՆՔ ՉԵՆ ՈՒՆԵՆԱ». Ս. ՊԱՐՍՅԱՆ

Սեպտեմբերի 1-ից կենսաթոշակների ու նպաստների չափերը կավելանան. նման նախագիծ գործադիրը նախորդ շաբաթ է շրջանառել: Խոսքը, մասնավորապես, բազային կենսաթոշակի մասին է. այն նախատեսվում է բարձրացնել 3000, նվազագույն կենսաթոշակն ու նպաստները՝ 1900 դրամով: Թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է տնտեսագետ Սուրեն Պարսյանի հետ:

-Պարոն Պարսյան, կառավարությունը մի քանի հազար դրամով ցանկանում է ավելացնել թոշակներն ու նպաստները: Իշխանության տարբեր ներկայացուցիչներ սա որպես հերթական բարձրացում են ներկայացնում: Ձեր՝ որպես տնտեսագետի տեսակետը ո՞րն է:

-Հայաստանի կառավարության կողմից նախաձեռնությունը թոշակների, նպաստների բարձրացման, անշուշտ, ողջունելի է: Նման որոշումները պետք է կարեւորել, խթանել, սակայն այդ քաղաքականության առաջիկա գործարկումն ինչպես նախկինում, այնպես էլ այժմ հասցեական ու որոշակի չէ, ավելին՝ հաճախ պոպուլիստական է: Իշխանությունը նման քայլի է գնում, ոչ թե որովհետեւ գնահատում է երկրի սոցիալական իրական վիճակը կամ որովհետեւ ցանկանում է աղքատության առաջացնող հետեւանքները վերացնել, այլ այն բանի համար, որ կառավարական կաբինետին ոչինչ չանելու մեջ չմեղադրեն: Այնպիսի տպավորություն է, որ կառավարության անդամները նման ծրագիր են անում սոսկ հասարակության գնահատականին արժանանալու համար, ու հոգ չէ, թե արդյունք չեն ունենա:

-Իշխանավորներն անընդհատ գլուխ են գովում, թե 2018-ից հետո մի քանի անգամ են թոշակ, նպաստ ու անգամ նվազագույն աշխատավարձ բարձրացրել:

-Նախ՝ հիշեցնեմ, որ կառավարությունը նախատեսում է բարձրացնել բազային թոշակը, որն 28.600 դրամ է: Վերջին անգամ այն հունվարին է ավելացվել 2100 դրամով, այժմ էլ կբարձրանա 1900 դրամով ու կկազմի 30.500 դրամ: Հիշեցնեմ, որ բազային թոշակի հաշվարկը կատարվում է՝ ծայրահեղ աղքատության շեմից ելնելով, այսինքն՝այդ գումարը նախատեսվում է զուտ պարենային ապրանքներ գնելու համար: Ծայրահեղ աղքատության շեմը հաղթահարած են համարվում այն մարդիկ կամ թոշակառուները, որ բազային թոշակից ավելի թոշակ են ստանում: Ուշագրավ է, որ անցած տարի սննդամթերքը թանկացել է 12-13 տոկոս, բայց բազային թոշակը բարձրացել է ընդամենը 7-8 տոկոսով, այսինքն՝ 5-ից 6 տոկոսով մարդիկ ավելի քիչ ապրանքներ են կարողացել ձեռք բերել: Ստացվում է՝ անցած տարվա բազային թոշակով՝ 26.500-ով, մարդիկ ավելի շատ ապրանքներ կարող էին գնել, քան այս տարվա հունվարի 1-ից բարձրացված թոշակով: Հիմա կառավարությունը, անցած տարվա խնդիրը չլուծելով, հասկանում է, որ այս տարվա խնդիրներն էլ ավելի են մեծացել: Հաշվի առնելով, որ, այս տարվա հուլիս ամսվա կտրվածքով, սննդամթերքը թանկացել է 13.9, հացաբուլկեղենը՝ 15, բրինձը՝ 14, ալյուրը՝ 16.8, հացը՝ 14.4, միսը՝ 10 տոկոսով, կառավարությունը որոշել է, այսպես ասած, մեղմել այս տարվա գնաճի հետեւանքները: ՀՀ քաղաքացիները, անցած տարվա հետ համեմատած, բարձրացված 1900 դրամով չեն կարողանալու գնել նույն քանակությամբ ապրանքներ:

-Մի քանի հազար դրամն ինչպե՞ս կարող է զսպել օր օրի ահագնացող գնաճը:

-Կառավարությունը սոցիալական այս հետեւանքները մեղմելու կամ նվազագույնի հասցնելու համար պետք է գոնե 14 տոկոսով՝ 4000 դրամով բարձրացներ բազային թոշակը: Համեմատության համար նշեմ, որ Ռուսաստանի Դաշնությունը այս տարի արդեն 2 անգամ ինդեքսավորել է թոշակը ապրիլ-հունիս ամիսների գնաճը վերացնելու նպատակով: Հիմա մեր կառավարությունը ուղղակի, առանց որեւէ հաշվարկի, ուսումնասիրությունների, որոշել է սեպտեմբերին բարձրացնել թոշակը, ինչն ապացուցում է, որ գործադիրը հերթական անգամ բավական լուրջ գումարներ է փոշիացնում: Միանշանակ է, որ մենք չենք կարող չընդունել կամ մերժել այսպիսի ծրագրերը, քանի որ, բացի այն, որ յուրաքանչյուր թոշակառուի համար մի քանի հազար դրամի ավելացումը կարող է լուրջ խնդիր լուծել, այն նաեւ խիստ անհրաժեշտ է: Բայցեւ, այնուամենայնիվ, պետք է փաստենք, որ պետական կառավարման տեսանկյունից նման կերպով թոշակների բարձրացումն անարդյունավետ մոտեցում ու քաղաքականություն է:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՆՎԵՐ՝ ԿՈՄԲԻՆԱՏԻՑ

ԻՆՉՈ՞Ւ ՉԵՆ ՄԱՐՎՈՒՄ ԱՆԱՊԱՀՈՎՆԵՐԻ ՎԱՐԿԵՐԸ

Տնտեսագիտության թեկնածու Տիգրան Մուրադյանը մի ուշագրավ փաստ է հրապարակել՝ «Ի՞նչ է կատարվում ՋՊՄԿ (զարթնե՞f Լաո եւ Պողոս եղբայրներ) շուրջ» խորագրով: Նա ներկայացրել է ՋՊՄԿ եւ «Արդյունաբերական ընկերություն» ԲԸ միջեւ բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագրից քաղվածք եւ հայտնել. «Այս առուվաճառքի մասին, չգիտես՝ ինչու, հանրությանը ավետեցին 2021թ հոկտեմբերի 1-ին այն դեռ հունիսի 16-ին: Փաստաթղթում, մասնավորապես, ուշագրավ է հետեւյալ 2 փաստը.

1) 2021 թվականի հունիսի 16–ին «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ նաեւ ՋՊՄԿ) և «Արդյունաբերական ընկերություն» բաժնետիրական ընկերությունը (Акционерное общество "Промышленная компания") (այսուհետ՝ նաեւ Արդյունաբերական ընկերություն) ստորագրել են Բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագիր, որով ՋՊՄԿ-ն պարտավորվել է Արդյունաբերական ընկերությանը՝ որպես սեփականություն հանձնել ՋՊՄԿ կանոնադրական կապիտալում 1,649,003 (մեկ միլիոն վեց հարյուր քառասունինը հազար երեք) հատ հասարակ անվանական բաժնետոմս՝ պայմանագրով սահմանված պայմաններով:

2021 թվականի սեպտեմբերի 30–ին ՋՊՄԿ բաժնետերերի ռեեստրում գրանցվել է նշված բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը Արդյունաբերական ընկերությանը:

Մանրամասն՝
«Արդյունաբերական ընկերություն» բաժնետիրական ընկերության խոշոր և կառավարող բաժնետերը ռուս գործարար Ռոման Տրոցենկոն է, ով միաժամանակ տնօրինությունում և կառավարում է նաև «ԱԷՌՆ» կորպորացիան (http://www.aeoncorp.ru/):

«ԱԷՌՆ» կորպորացիայի խոշոր ծրագրերից են՝
- «Գեոպրոմայնինգը» (https://www.geopromining.com/)՝ միջազգային դիվերսիֆիկացված հանքարդյունաբերական ընկերություն, որ արդյունահանում և վերամշակում է ոսկի, արծաթ անտիմոն և պղինձ Ռուսաստանում և Հայաստանում.
- «Նովոպորտ» ՍՊԸ-ն (https://novaport.ru/)՝ Ռուսաստանում ռեգիոնալ օդանավակայանների խոշորագույն խումբ, որը տիրապետում և շահագործում է 18 ռեգիոնալ օդանավակայաններ.
- «Էս Դի Էս Ազոտ» բաժնետիրական ընկերություն (http://www.sds-azot.ru/)՝ Ռուսաստանում ազոտական պարարտանյութեր արտադրող խոշորագույն ընկերություններից մեկը.
- «ԱԷՌՆ Դեվելոփմենթ» շինարարական ընկերություն:

2) 2021 թվականի սեպտեմբերի 30–ին «Արդյունաբերական ընկերություն» բաժնետիրական ընկերությունը Հայաստանի Հանրապետությանն է նվիրել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունում իրեն պատկանող բաժնետոմսերից 412,251 հատ հասարակ անվանական բաժնետոմս (յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 20,000 ՀՀ դրամ):
ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30–ի թիվ 1613–Ա որոշման համաձայն՝ նվիրատվությունն ընդունվել է Հայաստանի Հանրապետության կողմից:

միլիոն բաղաքացիներիս, բայց, չգիտես՝ ինչու, այն տեղ չհասավ. կարող էր, օրինակ, ուղղվել վարկերի տակ կքող բնակչության ինչ-ինչ պարտավորությունների մարմանը: Հիշեցնեմ, որ 2003 թվականին նույն Քաջարանի պղնձամոլիբդենայինի մասնավորեցումից Քաջարան համայնքին բաժին հասած 32 միլիոն դոլարից բաղաքի ավագանին մեծահոգաբար 27 միլիոն դոլարը ուղղեց 01 հոկտեմբեր 2002թ. դրությամբ Հայաստանի էլեկտրական բաշխիչ ցանցերին ՀՀ ամբողջ բնակչության կուտակած պարտքերի մարմանը: Հիմա այսպես վարվեցին նվերի հետ «բալանչիները»... Օտակար է իմանալ այս փաստը»:

«Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը կապ հաստատեց Տիգրան Մուրադյանի հետ՝ խնդրելով պարզաբանել՝ երբ եւ ինչ պայմաններում է նախկինում Ռոբերտ Քոչարյանի օրոք, կոմբինատի վաճառքից գոյացած գումարը բաժանվել ՀՀ քաղաքացիների սպառած էլէներգիայի վարձավճարի փոխհատուցման համար: Նա ներկայացրեց նաեւ այդ որոշումը, որտեղ կարդում ենք.

«Կառավարության որոշմամբ՝ ՋՊՄԿ վաճառքից գոյացած 132 մլն դոլարից Քաջարան համայնքին բաժին հասած 32 միլիոն դոլարից քաղաքի ավագանին 27 միլիոն դոլարը ուղղել է 01 հոկտեմբեր 2002թ. դրությամբ Հայաստանի էլեկտրական բաշխիչ ցանցերին ՀՀ ամբողջ բնակչության կուտակած պարտքերի մարմանը»: Այսինքն՝ իսկապես քաղաքացիներին բաժին է հասել ՋՊՄԿ մասնավորեցման գումարից: Իսկ հիմա, երբ Կառավարությունը նույն ՋՊՄԿ-ից նվեր է ստացել, ինչ է ստացել ՀՀ շարքային, հպարտ քաղաքացին. ոչինչ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԺ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Քաղաքական դաշտի ընդդիմադիր խաղացողները, որ մի քանի թեւի են բաժանվում, դեռ խաղաքարտերը չեն բացում, թե ինչ են պատրաստվում անել, այսպես ասած, «թեժ աշնանն» ընդառաջ: Այժմ Լեհաստանում ՀՀ նախկին դեսպան, Վայոց ձորի նախկին մարզպետ Էդգար Ղազարյանի նախաձեռնած «Անկախություն» շարժումն է ակտուալ: Նախկին մարզպետը, սակայն, Հանրապետության հրապարակում մեկ հանրահավաք կազմակերպելուց հետո էլ ոչինչ չի նախաձեռնել: Նրա կողմից կազմակերպվելիք հաջորդ հավաքը, ըստ նախապես հայտարարվածի, մեկ էլ սեպտեմբերի 21-ին կլինի:

«Դիմադրություն» շարժումն է սեպտեմբերի 2-ին՝ Արցախի անկախության օրը հանրահավաքի պատրաստվում: Բայց թե ինչ են ասելու կամ ինչպես են գործելու, դեռեւս հայտնի չէ:

ArmLur.am-ը փորձեց հասկանալ, թե «թեժ աշնանն» ընդառաջ ինչ է պատրաստվում անել խորհրդարանական ընդդիմությունը. կվերադառնա՞ն արդյոք խորհրդարանական աշխատանքին: «Այս պահին խորհրդարան գնալու օրակարգ չունենք, նման հարց չի քննարկվում»,- մեզ ասացին թե՛ «Հայաստան», թե՛ «Պատիվ ունեմ» խմբակցության ներկայացուցիչները: Աժ հերթական՝ աշնանային նստաշրջանը, նշենք, սեպտեմբերի 12-ին կմեկնարկի:

ՆՈՐՄ ԿՍԱՀՄԱՆԵՆ

Կառավարությունն առաջարկում է փոփոխություն կատարել ՀՀ աշխատանքային օրենսգրքում: Կառավարության կողմից որոշում կայացնելու համար նորմ կսահմանվի: Բանն այն է, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմին չհամարվող բյուջետային հիմնարկների աշխատողներին բարձրլեռնային բնակավայրերում աշխատելու համար լրավճար սահմանելու մասով ուղիղ լիազորող նորմ կառավարության համար նախատեսված չէ: Տվյալ դեպքում նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է կառավարության համար նման կարգ սահմանելու համապատասխան լիազորող նորմ սահմանել: Իսկ, ահա, լրավճարը, ըստ օրենքի, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով նախատեսված դեպքերում եւ չափերով, հիմնական աշխատավարձից, հավելումից, հավելավճարից եւ պարգեւատրումից բացի, աշխատողին վճարվող ցանկացած ձեւի վարձատրությունն է:

ՀՍՏԱԿԵՑՎԵԼ ԵՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից արդեն իսկ մշակվել եւ շրջանառության մեջ է դրվել «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհերի ընտանիքներին եւ վիրավորում ստացած անձանց սոցիալական աջակցություն տրամադրելու կարգը հաստատելու մասին նախագիծը: Նախագծով շահառուների շրջանակը հստակեցվել է, որի համաձայն՝ աջակցություն կտրամադրվի զոհերի ընտանիքներին եւ վիրավորում, խեղում, վնասվածք ստացած այն անձանց, որոնք հիվանդանոցային պայմաններում բուժում են ստացել: Այս մասին հայտնել են ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտը մեկը մյուսի հետեւից մեղադրանք է առաջադրում եւ կալանավորում է Սյունիքի մարզի բնակիչներին պետական դավաճանության համար: Այս տարվա ընթացքում արդեն 5 տարբեր քրեական գործեր են ուղարկվել դատարան:

1. Գարիկ Մկրտումյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ քաղաքացի, կատարել է պետական դավաճանություն:

2. Օգոստոսի 26-ին դատարան է գնացել Մարզպետ Հովսեփյանի նկատմամբ հարուցված քրեական գործը, եւ նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ քաղաքացի, կատարել է պետական դավաճանություն:

3. Օգոստոսի 9-ին դատարան է ուղարկվել Լեւոն Գաբրիելյանի քրեական գործը եւ նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ քաղաքացի, կատարել է պետական դավաճանություն:

4. Օգոստոսի 1-ին դատարանում է գտնվել Դավիթ Ղահրամանյանի քրեական գործը: Վերջինիս մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ քաղաքացի, կատարել է պետական դավաճանություն, ապօրինի կերպով ձեռք է բերել, փոխադրել եւ պահել ռազմամթերք:

5. Հուլիսի 27-ին դատարան է մուտք եղել Արգամ Սեդրակյանի քրեական գործը, եւ նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ քաղաքացի, կատարել է պետական դավաճանություն:

Դատելով նախաքննական մարմնի բացահայտումից՝ մարզում տղամարդիկ պետական դավաճանությամբ են զբաղվել: Տեսնենք, թե ինչ կբացահայտվի դատարանում, եւ ինչ կորոշի դատարանը:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ArmLur.am-ին մանրամասներ են հայտնի դարձել Դավիթ Բեկ փողոցում հնդիկ երիտասարդի սպանության դեպքով: Մասնավորապես, մեզ հասած լուրերի համաձայն՝ վերջինիս սպանել է իր ընկերը, որն այս պահին ձերբակալված է եւ իրավապահներին պատմել է, թե ինչու է գնացել այդ քայլին:

Սպանության կասկածանքով ձերբակալվածը պատմել է, որ երկու ընկեր են եղել ու Հայաստանում սովորել եւ աշխատել են քարի արտադրամասում: Այդ օրը աշխատանքի վայրում մեկը մյուսի նկատմամբ կատակներ է արել, ձեռք են առել միմյանց, եւ ինքը չդիմանալով երկաթով հարվածել է ընկերոջ գլխին, որի հետեւանքով նա մահացել է:

Նշենք, որ Shamshyan .com-ը գրել էր, որ օգոստոսի 28-ին սահմռկեցուցիչ սպանություն է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 09:00-ի սահմաններում ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Երեւանի գնդի 1-ին գումարտակի 2-րդ վաշտի պարեկները ծառայություն կատարելիս են եղել, երբ նրանց է մոտեցել մի քաղաքացի ու հայտնել, որ Դավիթ Բեկի փողոցում՝ չգործող շինանյութի տաղավարի բաց հատվածում՝ բազմոցի վրա դի կա:

Ավելի ուշ պարզվել էր, որ սպանվածը Հնդկաստանի Հանրապետության քաղաքացի էր, որը սովորում էր բժշկական համալսարանում:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐ

ԵՐԿՈՒ ԵՐԿՐՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՁՐՈՒՅՑԵԼ ԵՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Ձրուցակիցները շնորհավորել են միմյանց Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ Բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ օգնության պայմանագրի 25-ամյա հոբելյանի առիթով:

Կողմերը համոզմունք են հայտնել, որ այսուհետ եւս հայ-ռուսական դաշնակցային փոխշահավետ հարաբերությունները տարբեր ոլորտներում կշարունակեն արդյունավետ կերպով զարգանալ ու ամրապնդվել:

Նիկոլ Փաշինյանը եւ Վլադիմիր Պուտինը մտքեր են փոխանակել հայ-ռուսական օրակարգային մի շարք հարցերի շուրջ:

Անդրադարձ է կատարվել նաեւ Լեռնային Ղարաբաղի շուրջ իրավիճակին:

Մասնավորապես ընդգծվել է 2020 թվականի նոյեմբերի 9-ի, 2021 թվականի հունվարի 11-ի եւ նոյեմբերի 26-ի եռակողմ պայմանավորվածությունների հետեւողական իրականացման կարեւորությունը:

Նշենք, որ ավելի վաղ Ռուսաստանի Դաշնության նախագահի մամուլի խոսնակ Դմիտրի Պեսկովն էր հայտնել, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հեռախոսազրույց կունենա Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

«Ռուսաստանի եւ Հայաստանի համար շատ կարեւոր օր է: 25 տարի առաջ մեր երկու երկրների միջեւ ստորագրվեց բարեկամության պայմանագիրը», - «ՌԻԱ Նովոստի» լրատվական գործակալության փոխանցմամբ՝ ասել էր Պեսկովը:

Ռուսաստանի նախագահի խոսնակը հավելել էր, որ կողմերն ընդգծում են այդ փաստաթղթի կարեւորությունը երկկողմ հարաբերությունների համար, եւ թե սա լավ հնարավորություն է՝ քննարկելու նաեւ ընթացիկ խնդիրները:

Պայմանագրի 25-ամյակի առթիվ նաեւ ՌԴ արտաքին գործերի նախարարությունն էր հայտարարություն տարածել: Ռուսական խաղաղապահ կոնտինգենտը Լեռնայի Ղարաբաղում մնում է խաղաղության ապահովման առանցքային գործոնը. հաղորդում է Ռուսաստանի արտգործնախարարությունը՝ Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ Բարեկամության, համագործակցության եւ փոխօգնության պայմանագրի կնքման 25-ամյակի ուղերձում:

Երկրի արտաքին գերատեսչությունը նշում է, որ Մոսկվան «առանցքային դաշնակցի դիրքից» կշարունակի օգնել Երեւանին պաշտպանունակության ամրապնդման, սահմանների անվտանգության, հարեւանների հետ հարաբերությունների կարգավորման գործում:

«Մենք համոզված ենք, որ տարածաշրջանում կայունության ճանապարհն անցնում է 2020 թվականի նոյեմբերի 9-ի, հունվարի 11-ի եւ 2021 թվականի նոյեմբերի 26-ի եռակողմ պայմանավորվածությունների խստիվ պահպանմամբ », - ասված է հայտարարությունում:

Գերատեսչությունը շեշտել է՝ «անցած ժամանակաշրջանը համոզիչ կերպով ցույց տվեց, որ Մոսկվայի եւ Երեւանի միջեւ պատմական կապերի հետագա ամրապնդումն ամբողջությամբ համապատասխանում է մեր ժողովուրդների կենսական շահերին, ծառայում է երկու երկրների սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին, կայունության ամրապնդմանը Հարավային Կովկասում»:

Մոսկվան հայտնում է, թե անկեղծորեն գնահատում է բարեկամությունը եղբայրական Հայաստանի հետ եւ վճռական է տրամադրված ռուս-հայկական դաշնակցային հարաբերություններն ամրացնելու՝ հանուն երկու երկների բարգավաճման:

Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ Բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ օգնության մասին պայմանագրի կնքման 25-ամյակի առթիվ ուղերձ է տարածել նաեւ Հայաստանի արտգործնախարարությունը՝ մեծապես արժեւորելով «եղբայրական Ռուսաստանի հետ բարեկամությունը», վճռականություն հայտնելով էլ ավելի ամրապնդելու հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունները՝ ի շահ երկու երկրների եւ ժողովուրդների բարգավաճման:

Երեւանն իր երախտագիտությունն է հայտնել «ռուս խաղաղապահների այն առանձնահատուկ դերակատարության համար, որը կոչված է համապատասխան պայմաններ ապահովելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի խաղաղ եւ արժանապատիվ կյանքի վերականգնման համար»:

Շեշտելով, որ Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում բարձր են գնահատում ռուսաստանյան կողմի գործուն քայլերը՝ ուղղված Հարավային Կովկասի տարածաշրջանում համապարփակ խաղաղության, վստահության մթնոլորտի եւ բարգավաճման հաստատմանը, Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունը եւս շեշտել է. «Համոզված ենք, որ տարածաշրջանում կայունության հաստատման ճանապարհը 2020թ. նոյեմբերի 9-ի, 2021թ. հունվարի 11-ի եւ նոյեմբերի 26-ի եռակողմ հայտարարությունների հստակ իրականացումն է»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է

Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը Ղազախստանի եւ Հայաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի կապակցությամբ շնորհավորել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին: «Մեծ գոհունակությամբ նշում եմ, որ անցած երեք տասնամյակների ընթացքում մեր պետություններին հաջողվել է կառուցել բարեկամության, վստահության եւ փոխադարձ աջակցության ամուր հարաբերություններ:

Դրա վկայությունն են ակտիվ քաղաքական երկխոսությունը, բազմակողմ ձեւաչափերով երկու երկրների հաջող փոխգործակցությունը, ինչպես նաեւ առեւտրատնտեսական եւ մշակութային-հումանիտար ոլորտներում գործընկերության համակարգված զարգացումը:

Վստահ եմ, որ մեր համատեղ աշխատանքն այսուհետ եւս կնպաստի երկկողմ համագործակցության ողջ սպեկտրով զարգախահայկական բազմաբովանդակ հարաբերությունների հետագա խորացմանը»,- ասված է ուղերձում:

ՄԻՋԱՆՑՔԸ ԿԳՈՐԾԻ

Արցախի եւ Հայաստանի միջեւ կապը օգոստոսի 31-ից հետո կիրականացվի նոր միջանցքով: Այս մասին հայտնում է Արցախի ներքին գործերի նախարարության ոստիկանությունը: Արցախը Հայաստանին կապող Շուշի-Բերձոր-Գորիս ճանապարհը կգործի մինչեւ օգոստոսի 31-ը ներառյալ: «Քաղաքացիների անվտանգ տեղաշարժն այս ընթացքում կապահովեն ռուս խաղաղապահները»,- ասված է հաղորդագրությունում: Օգոստոսի 31-ից հետո Հայաստանի հետ կապը կիրականացվի նոր միջանցքով՝ հարավային ուղղությամբ՝ Բերդաձորի ենթաշրջանի տարածքով, որի մասին Արցախի ՆԳ նախարարությունը խոստանում է առաջիկայում հստակ ու մանրամասն տեղեկություն տրամադրել: «Հաշվի առնելով քաղաքացիների մտահոգությունը՝ ՆԳ նախարարությունը օրվա կտրվածքով երկու անգամ՝ կեսօրին եւ երեկոյան, կիրապարակի Բերձորի գործող միջանցքի մասին թարմ տեղեկատվություն»,- նշված է հաղորդագրությունում:

ՓԱՍՏԵԼ ԵՆ ԿՐԿՆԱՍՏՈՒԳՄԱՄԲ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ վերացվել է «Սիմաո» ՍՊԸ-ին պատկանող կրեմային հրուշակեղենի արտադրամասի առանձին գործառույթի կասեցումը (Երեւան, Փափազյան 21/95): ՍԱՏՄ Երեւանի կենտրոնի տեսուչները կրկնաստուգմամբ փաստել են, որ նախկինում հայտնաբերված սանիտարահիգիենիկ նորմերի բոլոր խախտումները վերացվել են:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

ՀՀ քննչական կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել քրեական հետաքննություն Արթուր Ղազարյանի՝ քանաքեռցի Տույի, ԱԺ նախկին պատգամավոր Արտուշ Սիմոնյանի եւ եւս երկու անձանց սպանության դեպքով: Եվ, ահա, քրեական գործը դատարանում է եւ մակագրվել է Երեւան քաղաքի դատավոր Մանվել Շահվերդյանին:

Armlur.am-ին ուշագրավ հանգամանք է հայտնի դարձել: Սպանված ԱԺ նախկին պաագամավոր Արտուշ Սիմոնյանին, որը կրակոցների ժամանակ մահացավ իր սեփական տան բակում, նախաքննական մարմինը մեղադրանք է առաջադրել:

Այսպիսով, տեղեկացանք, որ Հակոբ Սիմոնյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2021 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 02:36-ի սահմաններում խմբի կազմում՝ հոր՝ Արտուշ Սիմոնյանի, եղբայրներ Վլադիմիր եւ Հովհաննես Սիմոնյանների եւ մտերիմներ Տիգրան Հարությունյանի եւ Արսեն Ալեքսանյանի հետ, Արթուր Հայկի Ղազարյանին, Արայիկ Բորիսի Խաչատրյանին, Արթուր Աշոտի Բորյանին, Գեւորգ Արթուրի Ջաբուրյանին եւ Գեղամ Արտուշի Ղազարյանին սպանելու՝ ապօրինաբար կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ Երեւան քաղաքի Քանաքեռ 16-րդ փողոցի 16Ա տան բակում վերջիններիս հետ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ նախապես ապօրինի կերպով ձեռք բերված եւ իրենց մոտ ապօրինի կերպով պահվող հրազեններով, փոխլրացնելով միմյանց գործողությունները, ատրճանակներով կրակել եւ ապօրինաբար կյանքից զրկել են Արթուր Ղազարյանին, Արայիկ Խաչատրյանին եւ Արթուր Բորյանին, իսկ Գեղամ Ղազարյանին եւ Գեւորգ Ջաբուրյանին պատճառել են հրազենային վնասվածքներ եւ վերջիններիս սպանությունն ավարտին չեն հասցրել՝ իրենց կամքից անկախ՝ Գ. Ղազարյանի եւ Գ. Ջաբուրյանի՝ փախուստի դիմելու հանգամանքով պայմանավորված:

Արտյուշ Վլադիմիրի Սիմոնյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, որդիների՝ Վլադիմիր, Հովհաննես, Հակոբ Սիմոնյանների, մտերիմներ Արսեն Ալեքսանյանի եւ Տիգրան Հարությունյանի հետ նախնական համաձայնության գալով, խմբի կազմում Արթուր Հայկի Ղազարյանին, Արայիկ Բորիսի Խաչատրյանին, Արթուր Աշոտի Բորյանին, Գեւորգ Արթուրի Ջաբուրյանին եւ Գեղամ Արտուշի Ղազարյանին սպանելու՝ ապօրինաբար կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ 2021 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 02:36-ի սահմաններում, Երեւան քաղաքի Քանաքեռ 16-րդ փողոցի 16 Ա տան բակում վերջիններիս հետ տեղի ունեցած վիճաբանության ժամանակ նախապես ապօրինի կերպով ձեռք բերված եւ իրենց մոտ ապօրինի կերպով պահվող հրազեններով, փոխլրացնելով միմյանց գործողությունները, ատրճանակներով կրակել եւ ապօրինաբար կյանքից զրկել են Արթուր Ղազարյանին, Արայիկ Խաչատրյանին եւ Արթուր Բորյանին, իսկ Գեղամ Ղազարյանին եւ Գեւորգ Ջաբուրյանին պատճառել են հրազենային վնասվածքներ եւ վերջիններիս սպանությունն ավարտին չեն հասցրել՝ իրենց կամքից անկախ՝ Գ. Ղազարյանի եւ Գ. Ջաբուրյանի՝ փախուստի դիմելու հանգամանքով պայմանավորված:

Այս գործով մեղադրյալի աթոռին են հայտնվել նախկին պատգամավորի մյուս երկու որդիները եւ նրանց տանը գտնվող բարեկամներից մեկը՝ Արսեն Ալեքսանյանը. մյուս որդին ազատության մեջ է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ

Ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ օգոստոսի 27-ին Հրազդանի կիրճում հայտնաբերվել, բաժին է բերվել եւ ձերբակալվել 59-ամյա Արմեն Խ.-ն, որը հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի (Ահաբեկչության մասին սուտ տեղեկություններ տարածելը) մեղադրանքով: Այս մասին հայտնում են ոստիկանությունից: Խափանման միջոցը՝ ստորագրություն:

ՄԻԵԴ-Ը ՄԵՐԺԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Օգոստոսի 18-ին Ադրբեջանը դիմել էր Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)՝ խնդրելով պարտավորեցնել Հայաստանին անմիջապես եւ անվերապահ իր վերահսկողության տակ գտնվող ուժերին եւ կառույցներին դադարեցնել Բերձոր քաղաքի եւ շրջակա գյուղերի գույքի ոչնչացումը՝ ներառյալը տների այրումը, եւ տրամադրել տեղեկատվություն՝ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ: Այս մասին հայտնում են Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակից: Ս.թ. օգոստոսի 22-ին ՄԻԵԴ-ը մերժել էր Ադրբեջանի դիմումը եւ արձանագրել, որ բացակայում է նոր միջանկյալ միջոց կիրառելու անհրաժեշտությունը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Կարմիր գծերը» խախտողների հեռախոսահամարներին հաղորդագրություններ կուղարկվեն: Այս մասին հայտնում են Երեւանի քաղաքապետարանից: Համայնքը նախանշում է իրավախախտման մասին ծանուցման եւս մեկ գործիք ունենալ: Քաղաքապետարանն առայժմ ծանուցումն ապահովում է փոստով կամ «Ազդարար» կայքով: Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը օգոստոսի 29-ի աշխատանքային խորհրդակցության ժամանակ ընդգծել է, որ համայնքի նպատակն ամենեւին էլ քաղաքացիներին տուգանելը չէ, այլ խախտման պարագայում ծանուցման եւս մեկ՝ մատչելի տարբերակի ստեղծումը:

ԴԱՍԱԼՔՈՒԹՅԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ

Ոստիկանության Լոռու մարզային վարչության եւ Թումանյանի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ բացատրական աշխատանքի արդյունքում օգոստոսի 27-ին Բագրատաշենի սահմանային անցակետում հայտնաբերվել, ձերբակալվել եւ Թումանյանի բաժին է տեղափոխվել 52-ամյա Ասատուր Մ.-ն, որը 2011թ. հուլիսի 17-ից հետախուզվում էր՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի մեղադրանքով: Խափանման միջոցը՝ կալանք: Նա ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին:

ԼՈՒՐԵՐ

ՓՈՐՁԵԼ ԵՆ ԿԱՆԽԵԼ

Ուշագրավ դեպք՝ Նոր Նորքում: Հարազատները փորձել են կանխել բարեկամի ինքնասպանությունը, սակայն, ցավոք, նա, գիտակցության չգալով, մահացել է: ArmLur.am-ը հայտնի դարձավ, որ 39 տարեկան Ա.Պ.-ն Նոր Նորքի 8-րդ զանգվածի իրենց շենքի նկուղում պարանով կախվելու միջոցով փորձել է ինքնասպանություն գործել, սակայն հարազատները տեսել են եւ ամեն ինչ արել են՝ կանխելու նրա գործողությունները, նրան շտապ տեղափոխել են հիվանդանոց, որտեղ օգոստոսի 29-ին՝ ժ. 03:00-ին, գիտակցության չգալով, 39 տարեկան տղամարդը մահացել է: Իսկ թե ինչն է պատճառը, դեռեւս հայտնի չէ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎՈՒՄ ԵՆ ԱՏՐՃԱՆԱԿՆԵՐ

Ոստիկանության աշխատակիցները Արտաշատ քաղաքում օգոստոսի 27-ին իրականացրել են հատուկ օպերացիա:

Արտաշատում հայտնի Բդոյի Դավիթ մականվամբ Դավիթ Պողոսյանը իր մոտ պահում է թմրանյութեր եւ զենք-զինամթերք: Դատարանի որոշմամբ խուզարկություններ են կատարվել Բդոյի Դավիթի՝Արտաշատի Օգոստոսի 23-ի փողոցի 58/1 հացսում գտնվող «Աուրա» գիշերային ակումբում:

Խուզարկության արդյունքում Դ. Պողոսյանի աշխատասենյակում հայտնաբերվել է կանաչավուն չորացված, մասնատված, կանեփանման բույսի զանգված, որ եղել է 2 փաթեթով: Մեկի մեջ եղել է 16.64 գ, իսկ մյուսի մեջ՝ 11.85 գ: Աշխատասենյակում հայտնաբերվում են նաեւ մասնատված «Մակարով» եւ «SS» տեսակի ատրճանակներ, թվով 18 հատ 9 մմ տրամաչափի փամփուշտներ: Դ. Պողոսյանը կասկածանքով ձերբակալվել եւ ներկայացվել է Հայաստանի քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչություն, որտեղ փաստի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՄԱՀԱՑԵԼ Է

Օգոստոսի 28-ին՝ ժամը 21:30-ին, Երեւանի Շրջանցիկ թունելի 2,8-րդ կմ-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ ընկել ձորը. 43-ամյա վարորդ Տիգրան Ս.-ն մահացել է, իսկ երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց: Հիվանդանոցի ճանապարհին մահացել է նաեւ 62-ամյա ուղեւոր Մնացական Գ.-ն:

23 ՏԱՐԻ ԱՆՑ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

Մոսկվա քաղաքում ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ օպերատիվ խմբին է ներկայացել եւ օգոստոսի 26-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքաթիռով Հայաստան է տեղափոխվել 53-ամյա Վախթանգ Պ.-ն, որը 1999 թ. օգոստոսից ոստիկանության Բազումի բաժնի կողմից հետախուզվում էր ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 175-րդ եւ 324-րդ հոդվածների մեղադրանքով. տեղեկացնում են ՀՀ ոստիկանությունից: Խափանման միջոցը՝կալանք: Նա փոխանցվել է Բազումի բաժնի ծառայողներին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 23-ից 24-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 40 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 25-ին նշանակված են Բերդ խոշորացված համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ: Ավարտվել է Բերդ համայնքի ավագանու ընտրությունների համար թեկնածուների առաջադրումը: Բերդ խոշորացված համայնքի ավագանու ընտրություններում ՔՊ կուսակցության առաջին համարը Բերդի միասնական սոցիալական ծառայության տնօրեն Վահրամ Սուքիասյանն է: «Արդարություն» կուսակցության եւ «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության ստեղծած դաշինքի՝ «Արժանապատիվ սերունդի» թեկնածուների ցանկը գլխավորում է Աշոտ Մելիքյանը, որը «Գազպրոմ Արմենիա» ընկերության հերթափոխի պետն է, նախկինում Բերդում գործող ձեռնոցների գործարանի հերթափոխի պետ է եղել: «Իմ հզոր համայնք» եւ Վահան Բաբայանի «Ռեֆորմիստների» կուսակցությունների կազմած դաշինքը ներկայացել է «Ջորավոր համայնք» անվանումով, որի նախընտրակյան ցուցակի առաջին համարը Հարություն Մանուչարյանն է:

2012թ.-ից՝ Բերդի քաղաքապետ, 2017-ից Բերդի խոշորացված համայնքի ղեկավար Հ. Մանուչարյանին մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին («Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) եւ 314-րդ մասին 1-ին մասերի հատկանիշներով («Պաշտոնեական կեղծիքը): Նա իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում: Հ. Մանուչարյանն անազատության մեջ է 2021թ.-ի նոյեմբերի 9-ից: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում այդ մասին հայտնեցին Բերդ համայնքից, որ Հ. Մանուչարյանի նախընտրական շտաբը ղեկավարելու է Բերդ համայնքի Նավուր բնակավայրի վարչական ղեկավար Արամ Նիգոյանը: Վերջինս 1999 թվականից մինչեւ 2017 թվականը Նավուր համայնքի ղեկավարն էր, 2017-ից մինչեւ այժմ՝ Նավուր բնակավայրի վարչական ղեկավարը: Նիգոյանը հայտնեց, որ Բերդ խոշորացված համայնքի վարչական ղեկավարները, ժողով անելով, որոշել իրեն առաջադրել «Ջորավոր համայնք» դաշինքի նախընտրական շտաբի պետի պաշտոնում: Արամ Նիգոյանը ներկայումս զբաղված է Նավուրում գյուղատնտեսական աշխատանքներ ղեկավարելով, սակայն դրանք ավարտելով՝ ամենայն հավականությամբ, կգխավորի «Ջորավոր համայնք» դաշինքի նախընտրական շտաբը: Նա ասաց, որ ինքն այդ նախընտրական ցուցակի 5-րդ համարն է, ուստի ավագանու ընտրություններից առաջ արձակուրդում է գտնվելու: Ա. Նիգոյանը երկար ժամանակ ԱԻՄ կուսակցության հավատարիմ, նվիրյալ անդամ է:

ԿԱՄԵՑՐԵԼ ԵՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոյեմբերյան խոշորացված համայնքի Այրում քաղաքի վարչական ղեկավար Արշակ Էվինյանի՝ որպես Այրում բնակավայրի վարչական ղեկավարի լիազորությունները կասեցված են. այս մասին տեղեկացանք Տավուշի մարզի Նոյեմբերյանի համայնքապետարանից: Քննչական կոմիտեն կասկածում է, որ ԵՊՀ «Իրավագիտություն» ֆակուլտետից Ա. Էվինյանին տրված դիպլոմը կեղծ է:

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴԳԾՈՂ ՆԱԽԱԳԻԾ

Արյունալի պատերազմից երկու տարի անց պետությունը բանակի վերաբերյալ մեկ առաջարկ է արել, ու այն ակնհայտորեն խտրական, սոցիալական անհավասարությունն ու անարդարությունը ընդգծող նախագիծ է. իրավապաշտպան Զարուհի Հովհաննիսյանի տեսակետն է՝ բանակից գումարի դիմաց ազատվելու նախագծի մասին:

Փաշինյանի կաբինետը՝ ի դեմս մասնագիտությամբ պատմության ուսուցիչ, պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի, նոր օրինագիծ է հրապարակ բերել, որ սահմանում է վճարել 24 մլն դրամ կամ 60 հազար ամերիկյան դոլար, ընդամենը 4.5 ամիս զինվորական ծառայություն անցնել ու ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից: Այդ գումարով, ասում են, մերօրյա իշխանավորները, պետությունը պայմանագրային զինծառայողին էլ ավելի բարձր աշխատավարձ կտա:

Իրավապաշտպանի գնահատմամբ՝ եթե օրենքն ընդունվի, ապա այն ոչ միայն խորացնելու է երկրում առկա բեւեռացումը, այլեւ մեծացնելու է անվստահությունը բանակի նկատմամբ:

Առանց այդ էլ, հավելում է մեր զրուցակիցը, «Բանակ» ինստիտուն այնքան է վարկաբեկվել, որ լրջագույն քայլեր պետք է իրականացվեին, բանակային ռեֆորմներ՝ բանակի հանրային ընկալումները փոխելու համար:

«Սակայն մենք տեսնում ենք, որ նման նախագծով էլ մարդիկ բանակն էլ ավելի են ընկալելու որպես անցանկալի մի տեղ, որտեղ հայտնվողները անվճարունակներ, անպահովներ ու անճարներ են»,- ասում է Զարուհի Հովհաննիսյանը:

Բանակում ծառայելուց ազատվելու վրա, իհարկե, զարմանալ պետք չէ. նմանատիպ, պարզապես՝ չգրված օրենք գոյություն է ունեցել ՀՀ երրորդ հանրապետության անկախության ստեղծումից ի վեր, երբ կլորիկ կաշառքի դիմաց մեծահարուստներին, հովանավորյալներին, արտոնյալներին, պաշտոնյաներին փոխկապակցված անձինք ազատվել են ծառայությունից: Փաշինյանի իշխանությունը, փաստորեն, քրեորեն պատժելի այդ «նորմին» իրավական ուժ տալ է ցանկանում:

Զարուհի Հովհաննիսյանը ցավով է նշում՝ այսօրվա կառավարությունը չի կարողացել նոր բան մտածել ու իրագործել, քան երեսուն տարի եղած վարքերի ու բարքերի լեգիտիմացումը:

«Դեռեւս 1990-ականներին մարդիկ վաճառում էին իրենց բնակարաններն ու Վազգեն Սարգսյանի մեթոդներով փողոցից բանակ բռնի կերպով տեղափոխված իրենց երեխաներին փորձում էին ազատել՝ փրկագին կաշառք վճարելով: Հիմա նույն սակագներն են. միջին կարգի բնակարանի գին վճարելով՝ մարդիկ պետությունից կգնեն իրենց կյանքի, առողջության, կրթության իրավունքը»,- հավելում է նա:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի թիմը 2021-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախընտրական ծրագրում էր գրել, որ նախատեսում է անցում կատարել պրոֆեսիոնալ բանակի, Փաշինյանը, սակայն, չէր մանրամասնել, որ դրան նախատեսում են հասնել այս ճանապարհով. «Հայաստանի Հանրապետությունը քայլ առ քայլ պետք է անցնի պրոֆեսիոնալ բանակի, բայց պրոֆեսիոնալ բանակը բավականին թանկ հաճույք է, ժողովո՛ւրդ: Եվ մենք որպեսզի էդ հաճույքը կարողանանք կյանքի կոչել, պիտի փոխենք մեր ընկալումը մասնավորապես մի կարեւորագույն ինստիտուտի նկատմամբ. դա հարկեր վճարելու ինստիտուտն է»:

Խոստումները՝ խոստումներ, բայց դրանք այդպես էլ իրականություն չեն դարձել, ու ինչ վերաբերում է բանակի ռեֆորմներին, ապա, մեր զրուցակցի գնահատմամբ, մինչեւ այս պահը որեւէ մեկն այդ մասին չի մտածել, թե, օրինակ, ինչպիսին պետք է լինեն ՀՀ զինված ուժերը: Հովհաննիսյանը վստահ է՝ այժմ արվում է հնարավորը, որ հասարակության մեջ էլ ավելի խորանա անջրպետը հարուստների ու աղքատների, ապահովվածների ու անապահովների միջեւ:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

4 ՏԱՐԻ՝ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2018 թ.-ին՝ թավշյա հեղափոխությունից հետո, «քայլիստները» մտան Երեւանի պետական համալսարանի Իջեւանի մասնաճյուղի նախկին տնօրեն Սամվել Առաքելյանի սենյակ եւ նրան հրաժարական պարտադրեցին: Դրանից հետո Իջեւանի մասնաճյուղի տնօրենի թեկնածուների մեջ էր վարչապետ Փաշինյանի քավորի՝ Իջեւանի քաղաքապետի ԺՊ Հայկ Ղալումյանի ընկերը՝ Հայկ Քամալյանը, որը շարքային դասախոս էր, մյուս թեկնածուները դոկտոր-պրոֆեսորներ էին: Անցած 4 տարում ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի տնօրեն չընտրվեց, որպես մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար պաշտոնավարում է Անուշավան Մակարյանը

ՁԵՎԱԿԱՆ ԱՃՈՒՐԴՆԵՐ

2018թ. հունվարի 15-ին կայացած Լուսաձոր համայնքի ավագանու նիստին ներկա ավագանու 4 անդամները որոշել են համաձայնություն տալ Լուսաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող ջրովի 16.38138 հեկտար վարելահողը տարեկան 819 հազար 69 դրամ վարձավճարով եւ անջրդի 4. 30956 հեկտար վարելահողը՝ 172 հազար 400 դրամ վարձավճարով, 5 տարի ժամկետով, մրցութային կարգով տրամադրելու մասին Լուսաձոր համայնքի ղեկավար Վարդան Սարդարյանի առաջարկությանը: Նույն նիստի օրակարգի 2-րդ կետով որոշվել է հաստատել վարձակալության մեկնարկային գինը եւ հավելաճի քայլը, 3-րդ կետով ավագանին համայնքի ղեկավարին պատվիրել է ապահովել մրցույթի հրապարակայնությունը, նախատեսել համապատասխան փաստաթղթերը այն կազմակերպելու եւ անցկացնելու համար:

Լուսաձոր համայնքի բնակիչները «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեցին, որ մինչ ավագանու 2018թ. հունվարի 15-ի նիստը ավելի քան 16 եւ 4 հեկտար հիշյալ վարելահողերը համայնքի ղեկավար Վարդան Սարդարյանը վարձակալությամբ տվել է «ՀիմնաՏավուշ» հիմնադրամին, 2017թ.-ի աշնանը այդ վարելահողերում ցանվել է աշնանացան ցորեն, առվույտ եւ կորնգան, ցանված ցորենի բերքը հիմնադրամի կողմից 2018թ. ամռանը բաժանվել է Լուսաձորի բնակիչներին: Փաստորեն, տեղի է ունեցել հողերի վարձակալության կեղծ մրցույթ: Նշենք, որ համայնքի ղեկավար Վարդան Սարդարյանը նախկինում ձեւական աճուրդներ է կազմակերպել: Վերջերս տարածվեց ՀՀ ոստիկանության հաղորդագրությունը, ուր նշված է, որ ոստիկանության Իջեւանի բաժնի հետաքննության բաժանմունքում նախապատրաստված նյութերի շրջանակում ձեռնարկված հետախուզական միջոցառումներով փաստական տվյալներ են ձեռք բերվել Լուսաձոր համայնքում կատարված ապօրինությունների վերաբերյալ: Ըստ քննությանը հայտնի տվյալների՝ համայնքի ղեկավարը, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, 2017-ից 2019 թվականների ընթացքում կազմակերպել է ձեւական աճուրդներ եւ տարբեր մակերեսներով գյուղատնտեսական ու էներգետիկ նշանակության հողատարածքներ է վաճառել տարբեր անձանց, այդ թվում՝ որդուն: Նյութերի նախապատրաստման ընթացքում բացահայտվել է ձեւական աճուրդի 7 դրվագ: Վաճառված հողատարածքների գումարը ընդհանուր 1 միլիոն 700 հազար դրամից ավելի է: Դեպքերի առթիվ ոստիկանության Իջեւանի բաժնում պաշտոնեական կեղծիքի հատկանիշներով քրեական գործ է հարուցվել, որն ուղարկվել է Տավուշի մարզի դատախազություն, որտեղ քրեական գործը «քնեցրել են»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 38 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 55-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում շարունակելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը՝նշված մեկնարկային գնով.

- ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն, Տերյան փողոց, 19 շենք, 28-29 հասցեում գտնվող 211ք.մ. բնակարան (որից՝ 106.5 ք.մ. բնակարան, 104.5 ք.մ. ձեղնահարկ): Լոտի մեկնարկային գինը՝ 215600000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 05.09.2022թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝30.12.2022թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.akson.am կայքը:

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի՝ 25.08.2022 համարում լույս տեսած, ինչպես նաեւ առանձին կայքերում տեղ գտած «Ինչպե՞ս են «Վիվա ՄՏՍ»-ի քարտերը հայտնվել Ադրբեջանի հատուկ ծառայությունների ձեռքին» հրապարակման մեջ պարունակվող տեղեկատվությունն առ այն, թե, իբր, մեջբերում ենք՝ ««Վիվա ՄՏՍ» ընկերությունը ադրբեջանցիներին բջջային քարտեր է բաժանել», իրականությանը չի համապատասխանում, ամբողջովին կեղծ է եւ շինծու:

«ՄՏՍ Հայաստան» ընկերությունը, ՀՀ-ում գործող մյուս բջջային օպերատորները Ադրբեջանի հատուկ ծառայությունների աշխատակիցներին, Ադրբեջանի քաղաքացիներին, ադրբեջանական անձնագրեր ունեցող անձանց հեռախոսահամարներ չեն վաճառել:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ՎԻՃԱԿՈՒՄ ԵՆ ԱՏՐԱԿՑԻՈՆՆԵՐԸ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության արտադրական վտանգավոր օբյեկտների ցանկում գրանցված է 212 ատրակցիոն, որոնցից 134-ը գտնվում են Երեւան քաղաքում, 78-ը՝ մարզերում: 2022 թվականի օգոստոսի տվյալներով՝ ընդհանուր փորձաքննության են ենթարկվել եւ տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն են ստացել դրանցից 139-ը, որոնցից 50-ը գտնվում են մարզերում, 89-ը՝ Երեւանում:

«Համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետի՝ յուրաքանչյուր արտադրական օբյեկտ, այս դեպքում՝ ատրակցիոնը, տարեկան առնվազն մեկ անգամ պետք է ենթարկվի տեխնիկական անվտանգության փորձաքննության, եւ իրավունք ունի շահագործվելու միայն փորձաքննության տեխնիկական ավտանգության դրական եզրակացություն ունենալուց հետո»,- ասել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագիտական լաբորատորիայի պետ Մարտին Ասլանյանը:

Փորձաքննության ընթացքում լինում են թերություններ, որոնք չեն հանդիսանում անմիջապես դեպքի սպառնալիք, այս դեպքում կազմվում է թերությունների վերացման միջոցառումների ծրագիր, սահմանվում է ժամանակացույց տվյալ շահագործողի հետ դրանց վերացման վերաբերյալ: Երբ վերացվում են այդ թերությունները, փորձագիտական խումբը կրկնակի ուսումնասիրություն է իրականացնում, եւ երբ տեսնում են, որ խնդիրները վերացված են, նոր տալիս են փորձաքննության դրական եզրակացություն:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից բացասական եզրակացություն ստանալուց հետո իրականացվում է ստուգում. եթե պարզվում է, որ ատրակցիոնը չունի դրական եզրակացություն, բայց շահագործվում է, իրականացվում է համապատասխան վարույթ: Տնտեսավարողը տուգանվում է 1 միլիոն դրամ, եւ կասեցվում է գործունեությունը, ինչպես նաեւ հետեւում են, որ ատրակցիոնը ապօրինի չշահագործվի, մինչեւ չվերացվեն բոլոր թերությունները, եւ կրկնակի փորձաքննություն չանցնեն:

ՀՀ ԱԻՆ-ում առկա է 41 ատրակցիոնի տվյալներ, որոնք 2022 թվականի մայիսի դրությամբ չեն ենթարկվել տեխնիկական անվտանգության ամենամյա փորձաքննության:

Ըստ այդ ցանկի՝ 2022 թվականի մայիսին իրականացրել են ստուգումներ, ինչի արդյունքում պարզվել է, որ դրանց մի մասը եղել են չգործող, կամ ընդհանրապես ատրակցիոններ չեն հայտնաբերվել, ենթադրաբար քանդվել են ու այլեւս գոյություն չունեն: Եղել է նաեւ հասցե, որտեղ համայնքի ղեկավարի որոշումով տվյալ ատրակցիոնը ապամոնտաժված է եղել: Ինչպես նաեւ ստուգման պահին եղել են հասցեներ, որոնք արդեն փորձաքննության կամ վերանորոգման փուլում են, եւ իրենք գրություն են ստացել տնտեսավարողից, որ վերանորոգումից հետո համապատասխան փաստաթղթով տեղյակ կպահեն փորձաքննության արդյունքների վերաբերյալ:

Ոչ մի ատրակցիոն շահագործման չի ենթարկվի, առանց համապատասխան փորձաքննության դրական եզրակացության: Փորձաքննության ընթացքում ստուգվում են ատրակցիոնի անվտանգության բոլոր հանգույցները: Եթե տրվում է բացասական եզրակացություն, ապա դա ուղարկվում է ՀՀ քաղաքաշինության, հրդեհային անվտանգության տեսչական մարմին, որտեղ արգելում են ատրակցիոնի շահագործումը, մինչեւ չունենան դրական եզրակացություն:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) եւ ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման եւ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին թիվ 1325-Ն» որոշմամբ (Որոշում)/ սահմանված կարգով՝ 2022թ. սեպտեմբերի 13-ին եւ 14-ին տեղի կունենան Սյունիքի մարզի դեգրադացված տարածքներում անտառտնկման եւ անտառվերականգնման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ (2-րդ փուլ) հետեւյալ ժամանակացույցով՝

Սեպտեմբերի 8, 2022թ.	12:00	Գորայք համայնք՝ Սպանդարյան բնակավայր
	16:00	Սիսիան համայնք
Սեպտեմբերի 9, 2022թ.	11:00	Գորիս համայնք, Խնձորեսկ բնակավայր
	14:00	Հարժիս բնակավայր

Հանրային լսումները տեղի կունենան համայնքապետարանների դահլիճներում:

Համաձայն որոշման՝ գնահատման հայտի վերաբերյալ առաջարկություններ եւ դիտողություններ կարող են ներկայացվել ծանուցումից հետո՝ 12 աշխատանքային օրվա ընթացքում:

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում (www.env.am), ք. Երեւան, Բուզանդի 1/3 հասցեում, 011/22-02-17, 011/22-02-18, (011) 575148, էլ.փոստ՝ nune.harutyunyan@rec-caucasus.am:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից, ՀՀ ջրային օրենսգրքի եւ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ N218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Աննա Ասատրյան Հայրապետի» ԱՁ-ի կողմից Արարատի մարզի Մասիս համայնքի Հայանիստ գյուղի վարչական տարածքում ձկնաբուծական նպատակով դրենաժային համակարգից 120.0 լ/վ նոր ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից 18:00-ն դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացրած փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2022 թվականի սեպտեմբերի 5-ին՝ ժամը 16:00 ին, Կառավարական 3-րդ տուն, (տարեթիվը, ամիսը, ամսաթիվը) 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԻՆ ԶԵՎՆ Է

ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՀԱՆԵԼ

ՀՀ ժողովրդական արտիստ, բալետի արտիստ, պարուսույց Ռուդոլֆ Խառատյանը վերջին շրջանում պարբերաբար ահազանգող հրապարակումներով է հանդես գալիս եւ իր մտահոգությունները ներկայացնում հայկական բալետի կործանման մասին:

ArmLur.am-ի հետ զրույցում Ռուդոլֆ Խառատյանը, որն այս պահին գտնվում է Վաշինգտոնում, խոսել է իրեն անհանգստացնող խնդիրների մասին:

«Բալետն այն արվեստի ճյուղն է, որը լեզու չունի, բայց կարողանում է խոսել վաղվա օրվա մասին, այն մասին, թե ուր ենք գնում, եւ ինչ պետք է կատարվի: Մեզ մոտ սովետական հին ձեւն է մնացել: Եթե մեր բալետի խաղացանկը նայեք, կտեսնեք «Չիպոլինո», որը մեզ հետ, մեր մշակույթի հետ որեւէ առնչություն չունի, եւ այն բեմադրվել է 1960-ական թվականներին Ռուսաստանում: Այսօր բեմադրել են «Ռոմեո եւ Ջուլիետ», որը 50 տարի առաջ իմ վրա են բեմադրել, ես եմ խաղացել: Պետք է բեմադրություններ անել եւ նորովի մատուցել հանդիսատեսին. չէ՞ որ այսօրը տարբեր է վաղվա օրից: Մենք այսօր չենք կարողանում հին ֆիլմերը նայել, քանի որ ձգտում ենք՝ ռիթմն ու տեմպը տարբեր լինի, համահունչ լինի մեր այսօրվա կյանքին, իսկ մեզ մոտ միայն ու միայն հինն է: Ես չգիտեմ՝ դա սովետական ձեւն է, թե հատուկ մտածված է այս թշնամությունը արվում հայ ազգի նկատմամբ: Մենք ունենք մեր ազգային խնդիրները, որոնք աշխարհին, ժողովրդին պետք է ցույց տանք մեր օպերային ներկայացումներով, մեր արվեստի միջոցով պետք է այդ խնդիրները բացենք, ցույց տանք, ինչը, ցավոք, չի արվում»,-ընդգծեց նա:

Ինչպես հիշում է Ռուդոլֆ Խառատյանը, Սովետական Միությունը «Կարապի լիճը» ներկայացման միջոցով կարողանում էր քաղաքական հարցեր լուծել. «Իսկ այսօր մենք լրիվ խնդիրները թողել ենք, մեր հանդիսատեսին պետք է կրթենք, դաստիարակենք խիզախություն սերմանենք: Կարծում եմ՝ այս հարցերը երկարատեւ լուծում են պահանջում, եւ բալետը շատ բանի մասին է խոսում: Մենք ամեն օր հող ենք կորցնում, տարածք ենք կորցնում՝ առանց հասկանալու, որ սրանք են պատճառները: Մեր անփութության պատճառով է, որ այսօր պետականություն ենք կորցնում»:

Ռուդոլֆ Խառատյանի խոսքով՝ այսօր մեր բալետն ունի նախանձելի երիտասարդներ, որոնց պետք է բերել եւ թույլ տալ, որպեսզի զարգացնեն, նոր գաղափարներ ներդնեն, ընդգրկվեն թատրոնի ներկայացումների մեջ, ոչ թե հիասթափեցնել:

«Իմ ներկայացումները բալետային խաղացանկից հեռացնելը, կարծում եմ, թշնամություն է ոչ թե իմ, այլ մեր երկրի հանդեպ, որովհետեւ իմ բեմադրություններն այսօր ցուցադրվում են MEZZO TV-ով, որը 60 մլն լսարան ունի: Ավստրիայի թատրոնն էր հետաքրքրված, որ ներկայացնի Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի հիմքի վրա բեմադրված «Ջույգ Արեգակներ» բեմադրությունը, հետո ճապոնական հեռուստատեսությունն անդրադարձավ դրան, իսկ թատրոնի ներկայիս ղեկավարությունն ասում է՝ չենք կարող խաղացանկ բերել, որովհետեւ, կներեք արտահայտությանս համար, ասացին՝ էշություն է: Բեմադրել եմ Շառլ Ազնավուրի մասին «Լա բոհեմ» ներկայացումը, որը պատրաստել եմ՝ անձամբ իր հետ համագործակցելով, եւ նա այսպես զամացած նայում էր բեմադրությունը, բայց այսօր դրանք չեն ցուցադրվում: Կարծես հայկականությունը մեր մեջից փորձեն հատուկ հանել. ես չեմ հասկանում, դա հատո՞ւկ է արվում մեր ղեկավարության կողմից»,- մեզ հետ զրույցում եզրափակեց մեր զրուցակիցը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԵՐԳԻ ՊՐԵՄԻԵՐԱ

Երեկ կայացավ երգչուհի Լիլիթ Հովհաննիսյանի Изгнанная երգի տեսահոլովակի երկրորդ մասի պրեմիերան: Այն կոչվում է Изгнанная, որը հայրենն թարգմանաբար նշանակում է «աքսորված»: Ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ երգչուհին նշում է՝ այսօր ամբողջ աշխարհում շատ կանայք ու աղջիկներ սեռական ոտնձգությունների են ենթարկվում տարբեր իրավիճակներում. «Նման դեպքերում շատերը լռում են ինչ-ինչ պատճառներով... Ճիշտ այդպես եղավ այս պատմության հերոսուհու հետ...»: Նշենք, որ երգչուհին տեւական աշխատանքային դադարից հետո վերադարձավ Изгнанная երգի տեսհոլովակով: Լիլիթն այս նախագծի վրա աշխատել է ավելի քան մեկ տարի:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Կորել է դիպլոմ՝ АК 180090, գրանցման համարը՝ 11532, տրված է՝ համաձայն 14 մայիսի 2021թ. N 91 հրամանի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (3)

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (նախնական փուլ) 2022 թ. սեպտեմբեր 9-ին՝ ժամը 11 :00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն բնակավայրի վարչական շենքում տեղի կունենան «ՍԵՎԱՐՏ» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Շողակնի տուֆի երեւակումում 2022-2023 թթ. իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրությունների տեղամասի ընդլայնման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ: Փաստաթղթերի փաթեթին կարելի է ծանոթանալ համայնքապետարում եւ ընկերության գրասենյակում՝ ՀՀ ք. Երեւան, Ամիրյան 20, Հայաստան: Հարցերի դեպքում զանգահարել 094059293, 095300097 հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (4)

Շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ N218-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի վարչական տարածքում Էդուարդ Ղազարյանի կողմից խմելու, կենցաղային նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից՝ 0.29 լ/վ նոր ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից 18:00-ն դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ): Ծանուցմամբ ներկայացրած փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2022 թվականի սեպտեմբերի 5-ին՝ ժամը 16-00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջական միջավայրի նախարարություն

ԼՈՒՐԵՐ

ԿԱՅԱՑԱՎ «ՁՅՈՒՆԵ ԹԱԳՈՒՀԻՆ» ՍԱՌՑԵ ՇՈՒՆ

Երեւանի գեղասահքի եւ հոկեյի մարզադպրոցում օգոստոսի 26-ին եւ 27-ին կայացավ «Ձյունե թագուհին» սառցե շոուն: Դերերում համաշխարհային ճանաչում ունեցող գեղասահորդներ են տարբեր երկրներից, նաեւ մարզիկներ՝ Հայաստանից:

Գեղասահքի դպրոցի մարզիչ Էլեն Համբարձումյանը, որը ներկայացման մեջ հանդես եկավ երեք կերպարներում, նշեց, որ հատուկ բեմադրության համար երաժշտություն է գրվել, որը օգնեց դերասաններին ներխուժել հեքիաթ: «Ամենը ստեղծված է, որ մեր հանդիսատեսը իրեն զգա հեքիաթում: Նմանատիպ միջոցառումները գեղասահքն ավելի մասսայական են դարձնում»,- ասաց նա՝ հավելելով, որ ներկայացումը կհետաքրքրի եւ մեծերին, եւ փոքրերին:

Սպորտի միջազգային վարպետ Սլավիկ Հայրապետյանն ընդգծեց, որ նման շոուներին մասնակցելը փորձի ձեռքբերում, նոր հմտություններ է տալիս: «Գեղասահքը ոչ միայն սպորտ է, այլեւ արվեստ: Այս բեմադրության մեջ բոլորս իրար օգնում ենք, մեր տարիների փորձը փոխանցում պատանի գեղասահորդներին»,-հավելեց նա:

ԲԱՑՎԵՑ «ՊԱՐՄԱՅԻ ՍԻՐՏԸ» ՖԻԼՄՈՎ

Մոսկվայի միջազգային կինոփառատոնը (ՄՄԿՓ) Ռուսաստանի մայրաքաղաքում բացվեց օգոստոսի 26-ին. այս տարի ստուգատեսը տարվա երկրորդ կեսին է տեղափոխվել արտասահմանյան երկրների կինեմատոգրաֆիստների խնդրանքով:

44-րդ ՄՄԿՓ-ն, որը 2018 թվականից անցկացվում է ապրիլի վերջին, այս տարի տեղափոխվել է արտասահմանյան երկրների կինեմատոգրաֆիստների այն դիմումից հետո, որ իրենք չեն կարողանա ժամանել եւ իրենց ֆիլմերը ներկայացնել ցուցադրությանը:

Փառատոնի բացման ֆիլմն այս տարի կդառնա ռեժիսոր Անտոն Մեգերդիչեւի «Պարմայի սիրտը» կինոնկարը: Փառատոնը կփակի հարավկորեացի ռեժիսոր Պակ Չհան Ուկայի «Հեռանալու որոշումը» աշխատանքը, որը Կաննի կինոփառատոնում նշվել է լավագույն ռեժիսուրայի համար. հաղորդել է «Ինտերֆաքս»-ը:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

● *Սեպտեմբերի 9-ին «Սպարտակ Արենաում» տեղի կունենա «Coca-Cola Music Fest Yerevan 2022» համերգ-փառատոնը: Տոմսերի արժեքը՝ 11000-50000 դրամ: Սկիզբը՝ ժամը 15:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՐՑ. Մշակութային արժեքների փորձագիտական գնահատման ի՞նչ կարգ է գործում Հայաստանի Հանրապետությունում:

Ժենյա Մինասյան (63 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների եւ մշակութային նշանակության առարկաների արվեստաբանական ու մշակութաբանական փորձաքննությունն իրականացնում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Փորձաքննության շահառուներ են հանդիսանում ՀՀ եւ օտարերկրյա քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, այդ թվում՝ ՀՀ պետական մարմինները: Փորձաքննությունն իրականացվում է ներկայացված դիմումի կամ հանձնարարության հիման վրա: Ֆիզիկական անձանց դեպքում գործընթացի սկիզբ է համարվում վերջիններիս կողմից կենտրոնի հայտագրման բաժին դիմում ներկայացնելը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գրության հրամանի, հանձնարարության, որոշման եւ փորձաքննության ենթակա իրի կամ իրերի եւ դրանց լուսանկարների տրամադրումը: Փորձաքննության առավելագույն ժամկետ է համարվում 15 օրը՝ բացառությամբ կողմերի համաձայնությամբ որոշակի ժամկետով երկարաձգելու դեպքերի: Կենտրոնը փորձաքննությունն իրականացնում է 28 ոլորտներում: Փորձաքննության արդյունքում հայտատուին տրամադրվում է համապատասխան փորձագիտական եզրակացություն: Փորձաքննության դիմաց հայտատուն կատարում է վճարներ՝ «Մշակութային արժեքների արվեստաբանական եւ մշակութաբանական փորձաքննության, ինչպես նաեւ իրականացվող այլ ծառայությունների վճարների գանձման մասին» կարգին համապատասխան:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումն իրականացվում է՝ ՀՀ կառավարության 2007թ. հունիսի 1-ի N 827-Ն որոշման պահանջների համաձայն: Մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելիս հայտատուն մաքսային մարմին պետք է ներկայացնի հայտարարագիր, մշակութային արժեքներն ու դրանց լուսանկարները /3 օրինակ/: Մաքսային մարմնում համապատասխան ընթացակարգով ձեւակերպվում է մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞վ իրավունք ունի դիմելու եռամսյակային հրատապ օգնություն ստանալու համար:

Լիլիթ Գեւորգյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եռամսյակային հրատապ օգնության իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք չունեցող, անապահովության «0» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքը անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում (արտակարգ իրավիճակների եւ կարճատեւ ֆինանսական խնդիրներ ունենալու) հայտնվելու դեպքում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Միանվագ հրատապ օգնության չափերն ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում սահմանվել են՝

1) երեխայի ծննդյան դեպքում՝ 50 հազար դրամ,

2) երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում՝ 25 հազար դրամ,

3) ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 50 հազար դրամ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեւան-Սեւան ավտոճանապարհին՝ Հյուսիսային ավտոկայանի հարեւանությամբ, բախվել են Mercedes ML320, Honda Conceptor, Nisan March, Opel Astra, UAZ մակնիշի ավտոմեքենաները: Բարեբախտաբար, զոհեր չունենք. վարորդները ստացել են մարմնական վնասվածքներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.08.2022**
Հասցեն՝ Գերպրոնիրքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: